FRIEDRICH EBERT STIFTUNG
Yerevan

# Անկախության սերունդ.

## կրթություն, հասարակության ձգտումներ և եզրահանգումներ զարգացման համար

ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սեպտեմբեր, 2017

- Հայաստանն անցումային պետություն է, ներառյալ անցումը այնպիսի ընկալումների և ձգտումների, որոնք սահմանում են զարգացման ուղղությունն ու դերը, որ Հայաստանը կարող է ստանձնել գլոբալ առումով: Կրթությունն այս տեսանկյունից ծառայում է ոչ միայն որոշակի ընկալումներն ու ձգտումները փոխանցելու, այլև դրանք ուսումնասիրելու և վերափոխելու հզոր միջոց ու կարող է մեծ ազդեցություն գործել պետության զարգացման վրա:

- Ներկայումս Հայաստանում կրթությունն անցումային գործընթացում է, որտեղ անցյալի տոտալիտար երանգները միախառնված են «ժողովրդավարական» իրողությունների հետ: Վերջիններս ցայտուն կերպով արտացոլում են «ազատ շուկայի» միջավայրը, որտեղ համալսարանների մեծ թիվը բավարարում է դիպլոմի պահանջարկը, դպրոցներն ու ուսուցիչներն առաջնորդվում են «լավ գնահատականներ» ապահովելու հասարակության պահանջով, և կրթությունն ընդհանուր առմամբ դիտարկվում է որպես հասարակ ծառայություն:

- Արժեքները, հմտությունները և գիտությունը կամ, այլ կերպ ասած, «սովորել լինելու համար»-ը, «սովորել իրականացնելու համար»-ը և «սովորել իմանալու համար»-ը ընդհանուր առմամբ չեն ընկալվում որպես կրթության գլխավոր ձգտումներ: Հայաստանի երիտասարդությունը սահմանափակ ձգտումներ ունի՝ կապված կրթության արժեքի հետ. նրանք ընդունվում են համալսարան՝ մտավոր ունակությունները զարգացնելու, ինքնահիրացման հասնելու, դիպլոմ ստանալու, ծնողների սպասելիքներն արդարացնելու և սոցիալական կարգավիճակ ստանալու համար:

- Քաղաքականության մշակումը, տարատեսակ մասնավոր նախաձեռնությունները (որոշ բացառություններով) և հանրային կարծիքը Հայաստանում հաճախ հայտվում են կարճաժամկետ լուծումներ փնտրելու ծուղակում: Թեև այս նախաձեռնություններն իսկապես դեր են խաղում և միանգամայն կարևոր են կարճաժամկետ հեռանկարի համար, երկարաժամկետ կայուն զարգացման տեսանկյունից գլխավոր եզրահանգումն այն է, որ առկա է կրթության և դրա միջոցով թիրախավորված վերափոխման խիստ անհրաժեշտություն:

«Ի՞նչ մտահոգություններ, ձգտումներ, արժեքներ ունի և ի՞նչ կենսակերպ է վարում Հայաստանի երիտասարդությունը: Վերջերս հրապարակված «Անկախության սերունդ 2016 - Հայաստան» հետազոտությունը, որը պատվիրվել է «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի և իրականացվել Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի կողմից, արժեքավոր պատկերացում է տալիս Հայաստանի երիտասարդության ընկալումների մասին:

Այս ակնարկում անդրադարձ է կատարվում հետազոտության առանցքային որոշ եզրահանգումների (կրթության ոլորտում)՝ Հայաստանում կրթության վերաբերյալ հասարակության ձգտումների և այդ ձգտումների՝ Հայաստանի կայուն զարգացման ու մրցունակության վրա ունեցած ազդեցության տեսանկյունից:

## Հակասական ձգտումներ

- Հայաստանում համալսարանական կրթության որակը որոշ չափով բավարարում է ուսանողների 83 տոկոսին. համալսարանները դիտվում են որպես հասակակիցների հետ շփվելու վայրեր (ուսանողների 72.1 տոկոսը հաճույք է ստանում համալսարան հաճախելուց):

- Երիտասարդներն ընդհանուր առմամբ չեն կարծում, որ մասնագիտական գործնական հմտություններ ունենալը կապահովի իրենց աշխատանքով:

- Համալսարան հաճախելը համարվում է նորաձև և առանցքային դեր է խաղում կողակից ընտրելու հարցում: Ամուսնանալուց հետո կրթությունը դադարում է նպատակ դառնալ երիտասարդության մոտավորապես 76 տոկոսի համար, ամուսնալուծվելուց հետո՝ մոտավորապես 71 տոկոսի համար:

- Համալսարանավարտների մոտ 50 տոկոսը չի աշխատում իր մասնագիտական ոլորտում:

Այս և ստորև բերված ցուցիչների համադրումը բացահայտում է Հայաստանի անկախության սերնդի ընկալումները, իրազեկվածության մակարդակը և ակնկալիքները:

## 1.1 Ինչո՞ւ կենտրոնանալ ձգտումների վրա կամ ինչո՞ւ են դրանք կարևոր

Հասարակությունները հիմնված են ընկալումների և ձգտումների վրա, որոնք հիմնականում սահմանում են հասարակության դերը ոչ միայն պետության համատեքստում, այլև գլոբալ առումով: Այլ կերպ ասած՝ կայուն զարգացումն ու մրցունակությունը մեծապես կախված են տվյալ հասարակության ներսում գերիշխող ընկալումներից և ձգտումներից, քանի որ դրանք են մարդկային ռեսուրս ու պոտենցիալ ձևավորում նորարարության համար, ազդում քաղաքական ինստիտուտների և գործընթացների վրա, կապեր ձևավորում տնտեսության և կրթական հաստատությունների միջև: Հասարակության ընկալումներն արտացոլում են հասարակության վերաբերմունքը հստակ ժամանակահատվածում և տարածությունում՝ պայմանավորված կոնտեքստուալ գործոններով (օրինակ՝ աշխատանքի բնույթ, տնտեսության ոլորտ և այլն), մինչդեռ ձգտումները զգալի հաշվով հանդես են գալիս որպես մեխանիզմներ՝ իրականացնելու այդ փոփոխությունները:

Ընկալումների և ձգտումների փոխազդեցությունը կարող է բավական չափելի հետևանքներ ունենալ պետության զարգացման տեսանկյունից: Օրինակ՝ ընկալումը, որ մասնագիտական գործնական հմտություններ ունենալը աշխատանքով չի ապահովի, սակայն ծանոթ ունենալը կապահովի, հաճախ հանգեցնում է պարզապես դիպլոմ ստանալու ձգտման՝ որպես շուկա մուտքի արգելքը հաղթահարելու օրինական միջոց: Այս ձգտումն իր հերթին ստեղծում է դիմորդների անհամապատասխանություն բարձրագույն ուսումնական ծրագրերի և տնտեսության պահանջների միջև (օրինակ՝ ավելի քիչ հայտադիմումներ գիտությունների ոլորտում, ավելի շատ՝ հումանիտար)՝ ձևավորելով տնտեսություն, որում առկա է բարձր որակավորում

1. www.fes-caucasus.org/news-list/e/independence-generation-youth-study-2016-armenia/

պահանջող մոտավորապես 2-3 հազար թափուր աշխատատեղ տեխնոլոգիաների ոլորտում:

Զգտումներն ու ընկալումներն ամենուր են և վճռորոշ դեր են խաղում նաև «զարգացող» ոլորտներում, որոնք հաճախ համարվում են նման գործոններից նվազ կախում ունեցող: Արտաշես Վարդանյանը հայկական ստարտափների առանձնահատկությունների մասին իր հոդվածում բերում է մի քանի լավ օրինակ, թե ինչպես են ընկալումներն ու ձգտումները ձևավորում հայկական ստարտափ էկոհամակարգի իրականությունը:

Հայաստանն անցումային շրջան ապրող պետություն է. այն կենտրոնացվածից անցել է շուկայական տնտեսության՝ մի գործընթացի միջոցով, որը նախատեսում է ազատականացում, տնտեսության վերակառուցում և սեփականաշնորհում, իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ ժողովրդավարական պետության ուղղությամբ: Անցումային գործընթացն արդեն երրորդ տասնամյակում է, և չափազանց կարևոր է վերահաստատել, որ անցումն ավելին է, քան «տնտեսական և պետական ռեժիմի» պարզ փոփոխությունը: Անցումը նախևառաջ հասարակության ընկալումների և ձգտումների փոփոխություն է: Անցումային հասարակությունները, որպես կանոն, «հակասական սոցիալական կառույցների» միջավայրեր են, որտեղ «հին» ու «նոր», լոկալ ու գլոբալ արժեքներն ու գաղափարախոսությունները համագոյակցում են և «մրցում» միևնույն իրականության մեջ: Իրականությունը փոխելու համար հասարակության ընկալումներն ու ձգտումները պետք է հետևողականորեն ուսումնասիրվեն:

Կրթությունն այս առումով կարող է ծառայել ոչ միայն որպես որոշակի ընկալումներն ու ձգտումները փոխանցելու, այլև այդ ընկալումներն ու ձգտումներն ուսումնասիրելու և վերափոխելու հզոր միջոց ու մեծ ազդեցություն գործել պետության զարգացման վրա: Կան տարբեր օրինակներ՝ Պրուսիայում կրթական բարեփոխումներից (օրինակ՝ Համբոլդթի կրթության մոդելը), հետպատերազմյան Ֆինլանդիայում peruskoulu-ի [ֆիններեն՝ հիմնական դպրոց] ներդրումից, Սինգապուրում «Մտածող դպրոցներ, սովորող ազգ» քաղաքականությունից մինչև ՅՈՒՆԵՍԿՕ-ի ստեղծած Դելորի հանձնաժողովի զեկույցը կրթության չորս հիմնասյուների վերաբերյալ, որոնք բացահայտում են այն դերը, որ կարող է ստանձնել կրթությունը հասարակության ընկալումների ուսումնասիրման հարցում՝ ձևավորելով ձգտումներ, որոնք կարող են հեռահար ազդեցություն ունենալ զարգացման գործում:

Հայաստանի հասարակության ներկայիս ձգտումների ընկալումն ու ուսումնասիրությունը կօգնի հասկանալ՝ ինչի վրա է պետք կենտրոնանալ Հայաստանի ապագայի հարցում:

«Հայաստանի անկախության սերունդը» հետազոտությունը (այսուհետ՝ Հետազոտություն) այս առումով հետաքրքիր է՝ որպես «թեստ», որը մատնանշում է հասարակության ներկա ընկալումներն ու ձգտումները: Այն նաև հնարավորություն է տալիս՝ մշակելու քաղաքականություն, որը նպատակ ունի ուսումնասիրել և վերափոխել այդ ընկալումներն ու ձգտումները՝ ապահովելու համար զարգացում և մրցունակություն:

## 1.2 Ի՞նչ ձգտումներ ունի Հայաստանի երիտասարդությունը կրթության հարցում

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ստեղծած Դելորի հանձնաժողովը 1996թ. հրապարակեց 21-րդ դարի կրթությանը նվիրված զեկույց՝ «Կրթություն. թաքնված հարստություն» խորագրով, որն առաջարկում էր կրթության չորս հիմնասյուն (այսինքն՝ ձգտումներ՝ հանուն կրթության և կրթության միջոցով)՝ «սովորել միասին ապրելու համար», «սովորել իմանալու համար», «սովորել իրականացնելու համար» և «սովորել լինելու համար»: Լայն իմաստով այս հիմնասյուները կամ ձգտումները նկարագրում են միջազգային կրթական հաջողված բարեփոխումները և ձևավորում պետությունների միջազգային

2. www.evnreport.com/economy/mindset-of-armenian-startups-the-dos-and-the-don-ts

մրցունակության հիմքը: Հետազոտության արդյունքների վերլուծումը՝ կրթության հիմնասյուների կամ կրթությանը վերաբերող ձգտումների համատեքստում, հետաքրքիր պատկեր է ի հայտ բերում:

- Հայաստանի երիտասարդությունը սահմանափակ ձգտումներ ունի՝ կապված կրթության արժեքի հետ. նրանք ընդունվում են համալսարան՝ մտավոր ունակությունները զարգացնելու (26.6 տոկոս), ինքնահիրացման հասնելու (12.4 տոկոս), դիպլոմ ստանալու (16.3 տոկոս), ծնողների սպասելիքներն արդարացնելու (15.2 տոկոս) և սոցիալական կարգավիճակ ստանալու (7.2 տոկոս) համար: Դպրոցականների մոտ 60 տոկոսը և ուսանողների մոտ 45 տոկոսը կարծում է, որ ուսուցումը կլինի դյուրին և առանց սթրեսի: Ուսանողների մեծ մասը (մոտ 60-70 տոկոսը)՝ թե' դպրոցներում, թե' համալսարաններում, ծանրաբեռնված չէ դասերով և օրական երեք ժամ տրամադրում է ինքնակրթությանը:

- Հայաստանի երիտասարդությունը սահմանափակ վստահություն ունի կրթության դերի նկատմամբ. երիտասարդների մոտ 66 տոկոսը կարծում է՝ կրթության մակարդակը վճռորոշ գործոն չէ աշխատանք գտնելու համար: Երիտասարդները կարծում են, որ աշխատանք գտնելու տեսանկյունից շատ ավելի կարևոր է ծանոթի կամ ընկերոջ դերը, քան մասնագիտական գործնական հմտություններ ունենալը (29.5 տոկոս և 22.6 տոկոս համապատասխանաբար):

- Հայաստանի երիտասարդությունը հիմնականում երկարաժամկետ ձեռքբերումները փոխարինում է կարճաժամկետ բավարարվածությամբ. Հայաստանում համալսարանական կրթության որակը քիչ թե շատ բավարարում է ուսանողների մոտ 83 տոկոսին, թեև մոտ 50 տոկոսը չի գտնում աշխատանք իր մասնագիտությամբ: Ուսանողների 72.1 տոկոսը հաճույք է ստանում համալսարան հաճախելուց՝ որպես հասակակիցների հետ շփվելու միջոց: Համալսարան հաճախելը համարվում է նորաձև, սակայն հաշվի առնելով ստացած կրթությունը՝ հարցվածների 51.8 տոկոսը կարծում է, որ իր համար դժվար կլինի աշխատանք գտնել, իսկ 6.7 տոկոսը չի հավատում, որ երբևէ աշխատանք կգտնի: Տարօրինակ կերպով մտավոր ունակությունների զարգացումն ու ինքնահիրացումը հաճախ երկրորդական ձեռքբերում են համարվում:

## 1.3 Կորսվա՞ծ, թե՞ անցումային սերունդ

Հանրային դիսկուրսը հաճախ հայտնվում է ծայրահեղության ծուղակում՝ մենք կա'մ ունենք հրաշալի երիտասարդություն, կա'մ կորսված սերունդ: Իրականությունը շատ ավելի բարդ է: Հայաստանի երիտասարդության ընկալումներն ու ձգտումները շատ ավելի լայն պատկեր են ի հայտ բերում. ներկայում Հայաստանի կրթության ոլորտում գերիշխում են տոտալիտար երանգները՝ միաձուլված «ժողովրդավարական» որոշ իրողությունների հետ: Վերջիններս ցայտուն կերպով արտացոլում են «ազատ շուկայի» միջավայրը, որտեղ համալսարանների մեծ թիվը (60+) բավարարում է դիպլոմի պահանջարկը, դպրոցներն ու ուսուցիչներն առաջնորդվում են «լավ գնահատականներ» ապահովելու հասարակության պահանջով, և կրթությունն ընդհանուր առմամբ դիտարկվում է որպես հասարակ ծառայություն: Սա զարմանալի չէ, քանի որ կրթության ոլորտում անցումը ցանկացած փոլում այս կամ այն չափով ներառում է տոտալիտար և ժողովրդավարական երանգների համագոյակցում, եթե կրթության վերափոխումը հետևողականորեն ուղղված չէ տոտալիտար երանգները վերացնելուն:

Կրթության ոլորտում անցյալի տոտալիտար երանգների ժառանգությունը հաճախ հետտոտալիտար համատեքստ է բերվում ենթագիտակցորեն՝ քաղաքական գործիչների և փորձագետների միջոցով, որոնց մտավոր զարգացումն ընթացել է տոտալիտար միջավայրում: Այս երանգները բացահայտվում են մի շարք ձևերով՝ հիմնականում փաստացի գիտելիքի ուսուցանմամբ և գնահատմամբ՝

ընդունված կոնոնոտացիաների համատեքստում, կրթության արդյունքներով, որոնք խիստ սահմանափակ դեր են նախատեսում անհատի՝ իմաստ փնտրելու գործում, դիդակտիկ ուսուցմամբ, կրթությամբ, որը մերժում է արժեքների ուսումնասիրությունը և այլն: Սրանցից շատերը կարող են ծանոթ թվալ այսօրվա ուսանողներին: Տոտալիտար կրթությունն առաջացնում է կրթության հետ կապված սահմանափակ ձգտումներ: Սա չի նշանակում, որ տոտալիտար կրթությունը չի զարգացնում մտավոր ունակությունները և բարձրակարգ մտածողությունը: Ի տարբերություն ժողովրդավարական կրթության՝ տոտալիտար կրթության դեպքում մտավոր ունակությունների զարգացումն ընդհանուր առմամբ նշանակություն չունի: Պարզ ասած՝ հմտությունները կոչված չեն ծառայելու անհատական արժեքների և համոզմունքների ձևավորմանը: Տոտալիտար կրթության դերը բավական պարզ է. այն գաղափարախոսության և ընկալումների ու ձգտումների յուրահատուկ համադրություն է ստեղծում: Ժողովրդավարական կրթության դերը, ի հակադրություն, շատ ավելի բարդ է և մարդուն տալիս է զարգանալու հնարավորություն՝ արժեքների, հմտությունների ու գիտելիքի հարստացման միջոցով: Ժողովրդավարական կրթությունը, ի հակադրություն, արտացոլվում է ուսուցիչների օրինակով, որոնք հանդես են գալիս որպես սեփական փորձի և ուսանողների ուսուցման ոլորտի հետազոտողներ, ինչպես նաև ուսուցանմամբ, որն արտահայտվում է մենթորության, սուպերվայզինգի և քոուչինգի միջոցով, հետազոտությունների և արժեքների ուսուցանմամբ, զարգացմանն ուղղված՝ վերանայված արժեքների ու կրթության դերով և այլն:

Հետազոտության արդյունքներն ու վերոնշյալ դատողություններն ամփոփելու համար՝ նշենք.

1. Հայաստանն անցումային երկիր է, և սա, նախևառաջ, անցում է ընկալումների ու ձգտումների, որոնք զգալիորեն սահմանում են զարգացման ուղղությունն ու դերը, որ Հայաստանը գլոբալ առումով կարող է ստանձնել:
2. Կրթությունը կարող է առանցքային դեր խաղալ հասարակության ընկալումների ու ձգտումների ուսումնասիրման և փոխակերպման հարցում, սակայն որպես անցյալի ժառանգություն՝ այն ընդհանուր առմամբ չունի տեսլական՝ անհատական և սոցիալական համատեքստում մարդկանց դրդելու լայնախոհության և ավելի մեծ ձգտումների:
3. Կրթությունն անցումային գործընթացում է և բավական բնական կերպով է արտացոլում տոտալիտար երանգները, որոնք պետք է հետևողականորեն ուսումնասիրվեն, ինչը, սակայն, տեղի չի ունենում:
4. Արժեքները, հմտություններն ու գիտելիքը կամ այլ կերպ ասած՝ «սովորել լինելու համար»-ը, «սովորել իրականացնելու համար»-ը և «սովորել իմանալու համար»-ը ընդհանուր առմամբ չեն ընկալվում որպես կրթության գլխավոր ձգտումներ:
5. Երիտասարդությունը ենթարկվում է կրթության այս վերափոխման ազդեցությանը՝ երկիրն անցկացնելով կրկնվող շրջափուլերով: Խնդիրը կշարունակի մնալ արդիական, քանի այն հետևողականորեն չի լուծվել կրթական վերափոխման ճանապարհով:

## 2. Քաղաքականության մշակման համար եզրահանգումներ

Կրթության վերափոխման կրկնվող շրջափուլերը նշանակում են ավելի լայն վերափոխման շրջափուլեր՝ ներառյալ հասարակությունն ու տնտեսությունը: Այլ կերպ ասած՝ կայուն զարգացումն ու մրցունակությունը խիստ փոխկապակցված են երկրում կրթության դերի և որակի հետ:

Այն, որ կրթության ոլորտում Հայաստանն անցումային փուլում է, անակնկալ չէ: Սահմանափակ ձգտումներն ու կարճաժամկետ բավարարվածությունը, որն ընդհանուր

առմամբ ապահովում է կրթությունը, ստեղծում են սահմանափակ հնարավորություններ՝ դառնալու այնպիսի հասարակություն և տնտեսություն, որը կարող է դիմակայել մեր օրերի մարտահրավերներին, որոնք ներկայում առավել հայտնի են որպես «Չորրորդ արդյունաբերական հեղափոխություն»: Սա էլ ավելի ակնառու է դառնում՝ հաշվի առնելով այն, որ հարցված ուսանողների ընդամենը 5.4 տոկոսն է համատեղում ուսումն ու աշխատանքը, իսկ ընդհանուր հարցվածների մոտ 31 տոկոսը ո'չ աշխատում է, ո'չ սովորում: Ուսանող երիտասարդների միայն 37.4 տոկոսն է անցել պրակտիկա կամ մասնագիտական որակավորման հետագա դասընթացներ, ընդ որում՝ իգական սեռի ուսանողները շատ ավելի ակտիվ են:

Քաղաքականության մշակումը, տարատեսակ մասնավոր նախաձեռնությունները (որոշ բացառություններով) և հանրային կարծիքը Հայաստանում հաճախ հայտնվում են կարճաժամկետ լուծումներ փնտրելու ծուղակում (օրինակ՝ ծրագրեր՝ ուղղված որոշակի հմտությունների զարգացմանը, ինչպիսիք են կոդավորումը, ֆինանսական գրագիտությունը և այլն): Թեև այս նախաձեռնություններն իսկապես դեր են խաղում և միանգամայն կարևոր են կարճաժամկետ հեռանկարի համար, սակայն երկարաժամկետ կայուն զարգացման տեսանկյունից գլխավոր եզրահանգումն այն է, որ առկա է կրթության և դրա միջոցով թիրախավորված վերափոխման խիստ անհրաժեշտություն:

Կրթական բարեփոխումը միակողմանի երթևեկությամբ փողոց չէ. այն պահանջում է հավասարակշռություն արագ ու կարճաժամկետ լուծումներ պահանջող խնդիրների և հեռահար, փոփոխություններ բերող նախաձեռնությունների միջև, որոնք, հնարավոր է, արագ արդյունքներ չարձանագրեն: Կրթության և դրա միջոցով վերափոխումը որոշակի գին և փոխզիջում է պահանջում: Ըստ էության՝ այն կաճաժամկետ բավարարվածության և երկարաժամկետ կայունության, պատրաստի լուծումների և ներուժի ամրապնդման, քաղաքական վարկանիշների և հիմնավորված աշխատանքի միջև ընտրություն կատարելու գործընթաց է: Կրթության և դրա միջոցով հաջողված վերափոխումը պահանջել է մոտավորապես 25-30 տարվա նպատակաուղղված շարունակական ջանքեր՝ հաճախ պետական ֆինանսավորման ծավալի մեծացում (այսինքն՝ ՀՆԱ-ի մոտ 5 տոկոսի չափով) ապահովող կարճաժամկետ բավարարվածության հաշվին՝ լայնածավալ արդյունքների հասնելու նպատակով:

Հայաստանում կրթական բարեփոխումները պետք է լուծեն ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ խնդիրները՝ ապահովելու կրթության և դրա միջոցով վերափոխումը: Կարճաժամկետ լուծումներ պահանջող խնդիրները չպետք է անտեսվեն. նույնը վերաբերում է երկարաժամկետ լուծումներ և տեսլական պահանջող խնդիրներին:

Բարեփոխումների նմանատիպ քաղաքականությունը կարող է երաշխավորել շատ հստակ արդյունքներ ոչ միայն հասարակական մակարդակում, այլև տնտեսությունում՝ կարողությունների զարգացման և նորարարության ու գերազանցության ինստիտուտների ստեղծման միջոցով, իսկ պետական մակարդակում՝ շատ ավելի ակտիվ քաղաքացիական հասարակության ձևավորման միջոցով: Թեև վերափոխման հասնելու հարցում պետությունների փորձերը տարբերվում են, մի բան հստակ է՝ լուծումները չպետք է պատճենվեն, այլ պետք է դուրս բերվեն և մշակվեն լոկալ համատեքստի և ձգտումների լույսի ներքո: Պասի Սալբերգը իր «Ֆիննական դասեր» գրքում ներկայացնում է «Տարբերվելով՝ լինել կատարյալ » գաղափարը, որտեղ նա հիմնականում խոսում է Ֆինլանդիայի՝ գլոբալ ընդունված քաղաքականությունից սեփական ուղու որոնմանն անցնելու մասին. վերափոխում, որը Ֆինլանդիայից պահանջեց մոտ 40 տարի և տվեց չափելի արդյունքներ, որոնք վերափոխման մասին վկայեցին միայն բարեփոխումների երրորդ տասնամյակի ավարտին մոտ՝ 2001թ. սկզբին ՊԻԶԱ-ի [Ուսանողների միջազգային գնահատման ծրագիր] գնահատման արդյունքում:

## 3. Ամփոփելով՝

Լորեն Գրեհեմն իր «Միայնակ գաղափարներ. կարո՞ղ է Ռուսաստանը մրցել» գրքում մի փայլուն օրինակ է բերում՝ գրելով. «Ռուսները շարունակում էին հարցնել մեզ այն մասին, թե ինչպես կարող են հետ չմնալ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի հետազոտություններից այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են նանոտեխնոլոգիաները, բիոտեխնոլոգիան և համակարգչային գիտությունը: Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի ղեկավարը սկսեց խոսել ինստիտուտի «ձեռնարկատիրական մշակույթի», անգամ ուսանողների՝ հաջողված նորարարությունների նկատմամբ հանձնառության մասին... Ռուսները կրկին վերադարձան տեխնոլոգիային: Ինչպե՞ս կարող են իրենք ստեղծել «հաջորդ լավագույն բանը» առաջադեմ տեխնոլոգիաների ոլորտում: Ի վերջո Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի ղեկավարը վրդովված ասաց. «Դուք ուզում եք կաթ ստանալ՝ առանց կով ունենալու»:

Կրթության և դրա միջոցով վերափոխումը ընտրություն է կաթի (կարճաժամկետ լուծումներ՝ ձգտելով «հաջորդ լավագույն բանի»-ն) և կովի (երկարաժամկետ կայունություն՝ վերափոխման միջոցով) միջև: Հայաստանը պետք է աջակցի ոչ միայն կարճաժամկետ խնդիրների լուծմանը, այլև, գուցեև, առաջին հերթին հեռանկարային նորարարական ծրագրերի համար հնարավորություններ ստեղծելուն՝ միտված հեռահար վերափոխմանը՝ անգամ եթե վերջինս մոտ ապագայում չապահովի չափելի արդյունքներ:

## Հեղինակի մասին

**Նարեկ Մանուկյանը** Կրթության գերազանցության ազգային ծրագրի (որը ստեղծել է «Այբ» կրթական հիմնադրամը՝ Քեմբրիջի համալսարանի, Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի և ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ) աշխատակազմի ղեկավարն է: Նա ղեկավարել է Հայաստանի ազգային ուսումնական ծրագրի խոշորագույն համեմատական ուսումնասիրությունը՝ Հայաստանի անկախությունից ի վեր, որն իրականացվել է «Ի-Վի Քոնսալթինգի» հետ համատեղ՝ Համաշխարհային բանկի պահանջով: Քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների մագիստրոսի աստիճան է ստացել Հայաստանի ամերիկյան համալսարանում: Կրթության ոլորտում Նարեկը հետաքրքրված է ուսումնական ծրագրերի ուսումնասիրությամբ, կրթության տեսությամբ, համեմատական կրթական քաղաքականությամբ:

Հոդվածը պատրաստվել է «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի պատվերով իրականացված «Անկախության սերունդ 2016 - Հայաստան» հետազոտության հիման վրա:

## Հրապարակողի մասին

Ֆրիդրիխ Էբերտ Հիմանադրամ / Հայաստանյան գրասենյակ
Մոսկովյան փողոց 31 / 0002 Երեւան

Պատասխանատու՝
Ֆելիքս Հեթթ
Տարածաշրջանային համակարգող
Հեռ՝ +374 10 53 69 13
http://www.fes-caucasus.org/

Հրապարակումները պատվիրել՝
info@fes.am

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի կողմից հրապարակված նյութերի կոմերցիալ օգտագործումը չի թույլատրվում:

**Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի հայաստանյան գրասենյակը** Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակներից մեկն է, այն իրականացնում է Հայաստանին վերաբերող ծրագրերը Թբիլիսիի տարածաշրջանային գրասենյակի հովանու ներքո:

Հարավային Կովկասում ՖԷՀ-ը.

- ստեղծում եւ պահպանում է կապը ոչ միայն գործընկերների, այլեւ կառավարության, ակադեմիական, փորձագիտական շրջանակների, ՀԿ-ների, արհմիությունների, միջազգային կազմակերպությունների ու մամուլի եւ տարբեր ոլորտների կարեւոր դերակատարների հետ,

- մշակում, իրականացնում մի շարք ծրագրեր իր գերակա երեք ուղղություններով՝ տեղական եւ միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցու-թյան շնորհիվ,

- վերահսկում եւ վերլուծում է քաղաքական զարգացումները բոլոր երեք երկրներում՝ տեղական, գերմանական եւ եվրոպական փորձագետների, քաղաքական գործիչների, գործընկերների եւ շահագրգիռ հանրության լայնածավալ ցանցի ստեղծման նպատակով:

Հիմնական թեմաները.

- Մասնակցություն եւ ժողովրդավարություն
- Սոցիալական արդարություն, տնտեսություն եւ աշխատանք
- Խաղաղություն եւ անվտանգություն

Հոդվածի բովանդակության եւ նրանում արտահայտված կարծիքների համար պատասխանատվությունը կրում են հեղինակները: